

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ----- 2021թ.

N --- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի հ.315-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Կինոյի զարգացման «Ոսկե Ծիրան» հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված Երևան համայնքի սեփականություն հանդիսացող, Մոսկովյան փողոցի հ.3 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկի 214.9քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2026 թվականի ապրիլի 30-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է երկարաձգել Կինոյի զարգացման «Ոսկե Ծիրան» հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Մոսկովյան փողոցի հ.3 հասցեում գտնվող 214.9քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը:

Մոսկովյան փողոցի հ.3 հասցեում գտնվող շենքը համաձայն անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 06.09.2005թ. հ.1626147 վկայականի հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի հ.170-Ա որոշման հիման վրա նշված հասցեում գտնվող շենքի առաջին հարկի 214.9քմ մակերեսով ոչ բնակելի տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, հինգ տարի ժամկետով տրամադրվել է Կինոյի զարգացման «Ոսկե Ծիրան» հասարակական կազմակերպությանը: Կազմակերպության հետ 2011 թվականին կնքվել է ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման հ.1063 պայմանագիրը, որից ծագող իրավունքը ստացել է պետական գրանցում:

Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի փետրվարի 9-ի հ.466-Ա որոշմամբ թույլատրվել է քննարկվող ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգել մինչև 2021 թվականի հունվարի 25-ը: Երևան քաղաքի ավագանու որոշման կատարումն ապահովելու նպատակով ընդունվել է Երևանի քաղաքապետի 2016 թվականի փետրվարի 11-ի հ.370-Ա որոշումը: Որոշման հիման վրա 2016 փետրվարի 29-ին կազմակերպության հետ կնքվել է պայմանագրում փոփոխություն կատարելու մասին հ.836 համաձայնագիրը, որից ծագող իրավունքը ստացել է պետական գրանցում /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 04.03.2016թ. հ.04032016-01-0147, գաղտնաբառ՝ NWBMUHU79JGC վկայական/:

Մոսկովյան փողոցի հ.3 հասցեում գտնվող 214.9քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ Երևան քաղաքի ավագանու «Իմ քայլը» խմբակցությունը 12.03.2021թ., «Լույս» խմբակցությունը 24.02.2021թ., «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը 24.02.2021թ. գրություններով առարկություններ չեն ներկայացրել և այն գնահատել են դրական:

Նկատի ունենալով «Ոսկե Ծիրան» հասարակական կազմակերպության գործունեության ուղղվածությունը և կարևորությունը կինոյի զարգացման գործում, գնահատելով «Ոսկե Ծիրան» միջազգային կինոփառատոնի նշանակությունը Հայաստանի և մայրաքաղաք Երևանի միջազգային հեղինակության, մշակութային կյանքի կարևորության, հայկական կինոարվեստի տարածման գործում և ղեկավարվելով 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2021 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.315-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» որոշման նախագիծ, համաձայն որի առաջարկվում է Մոսկովյան փողոցի հ.3 հասցեում գտնվող 214.9քմ մակերեսով տարածքը մինչև 2026 թվականի ապրիլի 30-ը ժամկետով, տրամադրել Կինոյի զարգացման «Ոսկե Ծիրան» հասարակական կազմակերպությանը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ